



ՉԱՐԽԱՓԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ  
CHARKHAPAN SOORP ASDVADZADZIN

HOLY CROSS CHURCH OF ARMENIA  
NEW YORK, NEW YORK  
SEPT. 13 & 14, 1986

ՕԾՈՒՄ ՉԱՐԽԱՓԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՆԿԱՐԻՆ  
ԵՒ  
ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝

ՆԻՒ ԵՈՐՔԻ Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՀՈՎԱՆԱԻՐՈՒԹԵԱՄԲ՝

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ  
ԳԵՐՇ. Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ՝

ԱՄԵՆ. Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ  
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՑ

ՇԱԲԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 13 ԵՒ 14, 1986


HOLY CROSS CHURCH OF ARMENIA

NEW YORK



Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա.  
Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց

His Holiness Vazken I,  
Supreme Patriarch and Catholicos of All Armenians



ՆԻՒ ԵՈՐՔԻ ՍՈՒՐԲ ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՈՒԽՏԱՊԱՀ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՈՒՆ  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՅԱՐԳԱՐԺԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ  
ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ,

ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Հոգեկան մխիթարութեամբ կը յիշենք այն պահերը, երբ մեր այցելութեան առթիւ Նիւ Եորք, ձեզի հետ միատեղ զԱստուած փառաբանեցինք ձեր աղօթքի Տունին մէջ, որ ահա տարիներ շարունակ կը հանդիսանայ ամրակոտ ամրոց բազմադարեան հայ հաւատքին եւ հայկական ոգիին:

Սուրբ Խաչ եկեղեցին, մշտավատ ջահի մը նման երկար տարիներէ ի վեր Քրիստոսի աւետարանի ոգեղէն լոյսն ու ջերմութիւնը առատօրէն կը բաշխէ ձեզի բոլորիդ, ի մխիթարութիւն ձեր հոգիներուն եւ ի շինութիւն ձեր կրօնական ու մշակութային կեանքին, պահպանումովը մեր նախնեաց քրիստոնէական սուրբ ասանդութիւններուն:

Այս երջանիկ առիթով անհունօրէն մխիթարուած, եւ ընդառաջելով թեմիդ բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի խնդրանքին, ձեզի ամենուդ կը բերենք Մեր Հայրապետական օրհնութիւնը եւ ջերմագին մաղթանքները, որ Տէրը միշտ անասան ու լուսատա պահէ ձեր աղօթքի Տաճարը եւ անոր Սուրբ Սեղանէն միշտ երկնային շնորհները բաշխուին ձեզի ամենուդ, ձեր զաւակներուն եւ գալիք սերունդներուն, ի փառս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ եւ ի պարծանս հայ անուան:

Աղօթող ենք նաեւ որ Քրիստոսի սիրով միաբանած, ամուր մնաք ձեր նախահայրերու սուրբ հաւատքի վէմին վրայ եւ իբրեւ հարազատ եղբայրներ ապրիք ու գործէք խաղաղութեամբ եւ հոգեկան սուրբ ներշնչումներով:

«Զխաղաղութեան զհետ երթալք ընդ ամենեսին եւ զսրբութեան, առանց որոց ոչ որ տեսանիցէ զՏէր» /Եբր. ԺԲ 14/: Ամէն:

*Կապ Տե Զ.*

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄՆԵԱՅՆ ՀԱՅՈՑ

This page is sponsored by  
MR. & MRS. H. VOSKINARIAN



Ամենապատիւ Ս. Ենորհք Արք. Գալուստեան  
Պատրիարք Հայոց Թուրքիոյ



## ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԴԵՐԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻՆ ՄԷՋ

Հին դարերէն ի վեր պատկերներ գործածական եղած են Քրիստոնէական Եկեղեցիի մէջ: Յիսուսի անձնագործ պատկերին շատ տարածուած ասանդութիւնը, ինչպէս նաեւ Աստուածամօր մէկ նկարին գոյութիւնը առաքելական շրջանակին մէջ, արձագանգներն ու վկայութիւններն են վերեւ կատարուած հասաստումին: Իսկ անոնց գոյութիւնը եւ գործածութիւնը կանխագոյն դարերուն անժխտելիօրէն կը հաստատուի Հռոմի ստորերկրեայ Քրիստոնէական գերեզմանավայրերուն մէջ, որոնք այսօր «Գաթագոմայ» կը կոչուին, եւ որոնցմէ ոմանց հնութիւնը կը բարձրանայ մինչեւ երկրորդ դար: Կակուղ եւ կրաքարային վայրերու մէջ փորուած այս «թիւնեղանք» սրահները հարիւրաւոր քիլօմէթրներով կը տարածուէին քաղաքին ներքեւ եւ տեղ-տեղ աւելի ընդարձակ սրահներ ալ ձեւացած էին ուր հալածական եկեղեցին իր պաշտամունքները կը կատարէր անարգել: Ասոնց պատերուն վրայ մինչեւ մեր ժամանակները հասած են բարի Հովիի, Աստուածամօր, հասցերու հրաշքին եւ նման բազմաթիւ պատկերացումներ:

Ինչպէս որ Աստուած Եկեղեցիի կարգ մը անդամները կ'օժտէ յատուկ շնորհներով, «ոմանց կուտայ իմաստութեան խօսք, ոմանց՝ գիտութեան խօսք, ուրիշներուն՝ բժշկութիւն կատարելու շնորհք» եւլն եւլն (Ա. Կոր, ԺԲ. 4-11): Այնպէս ալ Աստուած կարգ մը տեղերու եւ պատկերներու հրաշք գործելու շնորհք կուտայ: Անոնցմէ օգտուելու համար պայման է, որ մօտեցողներ ալ օժտուած ըլլան «հաւատքի» շնորհով: Այս երկուքը, Աստուծոյ փրկարար եւ բուժիչ զօրութիւնը եւ մարդկային հաւատքը երբ իրարու միանան, կը ծնի հրաշքը: Բացայայտ է որ հրաշքի սկը եւ աղբիւրը նույնիսկ Աստուած է, եւ ոչ թէ մարդը կամ սրբապատկերը: Սուրբը կամ պատկերը միջնորդներ են միայն Աստուծոյ հրաշագործ զօրութիւնը մարդուն փոխանցելու. մարդ այդ զօրութեան գործակից կը դառնայ հաւատքով, առ նուազն արգելք չըլլալով Աստուծոյ ներգործութեան՝ թե՛րահաստութեամբ:

Աստուածային հրաշագործ այս զօրութեան եւ շնորհին արժանացած պատկերներէն մէկն էր մեր մէջ Արմաշի վանքին Աստուածամօր ասագ սեղանի նկարը, որ ծանօթ էր «ՉԱՐԽԱՓԱՆ» Ս. Աստուածածին անունով: Անոր ուխտի կ'երթային Իսթանպուլահայեր եւ շրջակայ գաւառներու հայ ժողովուրդը Խաչվերացի տօնին, իրենց ցաւերուն եւ ախտերուն դարման գտնելու հաւատքով եւ յոյսով. եւ կամ պարզապէս իրենց սէրն ու յարգանքը յայտնելու «Չարխափան» Ս. Աստուածամօր պատկերին: Իսթանպուլի մէջ անոնք որ այս կամ այն պատճառներով չէին կրնար մինչեւ Արմաշ երթալ, կ'այցելէին Իսթանպուլի Գարակիմրիք թաղի Ս. Յովհան Ոսկերեան Հայոց եկեղեցին, ուր եւս կար Աստուածամօր հրաշագործ մէկ պատկերը: Այս Եկեղեցին հրոյ ճարակ դարձած է 1900-ին, ուրկէ մեծ դժուարութեամբ ազատուած է՝ մասամբ մը խանձուած վիճակի մէջ՝ Աստուածամօր այս նկարը եւ Օրմանեան Պատրիարքի տնօրինութեամբ փոխադրուած է Պալաթու թաղին Ս. Հրեշտակապետաց Եկեղեցին, ուր կը մնայ ցայսօր: Այն օրէն առի՞ն՝ եւ Արմաշի Աստուածամօր պատկերին անջայտանալէն ի վեր՝ Պալաթի Եկեղեցին դարձած է ուխտագնացութեան նշանաւոր վայր յատկապէս Խաչվերացի տօնին, երբ ոչ միայն հայ հաւատացեալներ, այլ նաեւ յոյներ, հրեաներ եւ իսլամներ կը խընդունին իրենց անբուժելի հիւանդներով, առհասարակ հաշմանդամներով եւ համրերով: Դժբախտաբար արձանագրութիւն չի պահուիր, բայց գրեթէ ամէն տարի լոյր կը տարածուի որ մէկ-երկու բժշկութիւններ կատարուած են:

Արդ, կ'իմանանք որ Նիւ Եորքի Իսթանպուլահայեր կը փափաքին, վերի քաղաքի Ս. Խաչ Եկեղեցին նման ուխտավայրի մը վերածել, առնուազն օժտել զայն «Չարխափան» հրաշագործ Աստուածամօր նկարին վերարտադրութեամբ: Բարեպաշտական եւ հաւատաւոր ձեռնարկ մըն է ասիկա, արժանի ամենքիս գնահատանքին եւ քաջակերութեան:

Մեր օրհնութիւնը կուտանք բոլոր անոնց, որոնք այս բարի մտածումը ունեցած՝ ծրագրած եւ իրագործած են այս ձեռնարկը: Աստուած ընդունական ընէ անոնց աշխատանքը, աղօթքը եւ ուխտը:

Աղօթարար  
  
Ենորհք Արքեպիսկոպոս Գալուստեան  
Պատրիարք Հայոց Թուրքիոյ



Գերազնորն Ս. Թորգոմ Արք. Մանուկեան  
Առաջնորդ Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի



### «ՀԱՒԱՏՔ ԲՈՒ ԿԵՑՈՒՍՑԵՆ ԶՔԵԶ»

Երկրագունդին վրայ մարդուն կողմէ իրագործուած որեւէ նուաճում անկասկածօրէն խոր հաւատքի արդիւնք է:

Ս. Գիրքին մէջ արձանագրուած մեր Տիրոջ բոլոր պատգամներուն մէջէն հետեւեալ խօսքը ամենէն աւելի կը սահմանէ հաւատքի ներգործ զօրութիւնը. «Բու հաւատքդ պիտի ապրեցնէ քեզ»:

Առանց հաւատքի բարոյական կեանք գոյութիւն չի կրնար ունենալ, առանց հաւատքի որեւէ ծրագրում պատրանք է միայն եւ առանց հաւատքի արտասանուած որեւէ աղօթք՝ դատապարտուած է դէպի երկինք ճամբու ընթացքին չքանալու:

Հայ ժողովուրդին հաւատքի արտայայտութիւնները կը գտնենք իր պատմութեան էջերուն մէջ, իրաքանչիւր սերունդի հոգիին փրկութիւնը կենսատրոյ: Նոյնպիսի հաւատքի մը արդիւնքն է Նիւ Եորքի Ս. Խաչ Եկեղեցոյ հոգեւոր Հովիւին, Ծխական Խորհուրդին եւ Գործադիր Յանձնախումբին որոշումը՝ Եկեղեցոյ մէջ զետեղելու Չարխափան Ս. Աստուածածնի նկարը, որպէս զի հաւատացեալները դիմեն Աստուածածնի բարեխօսութեան՝ խափանելու համար չարն ու չարիքը:

1986 Սեպտեմբեր 13-ը ուխտի օր մը պիտի ըլլայ Ս. Խաչ Հայց. Եկեղեցոյ եւ շրջակայքի հաւատացեալներուն համար, երբ Թորքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Շնորհք Արք. Գալուստեան պիտի կատարէ օծումը Չարխափան Ս. Աստուածածնի իղաներկ նկարին:

Մեր ժողովուրդը յաճախ դիմած է Ս. Կոչսի բարեխօսութեան եւ Անոր ներկայացուցած է իր խնդրանքներն ու աղաչանքները: Եւ մեր հաւատացեալներուն համար նոր ուղի մը կը բացուի դէպի երկինք բարձրացնելու իրենց սրտարոխ աղօթքները:

Պատմութիւնը ցոյց տուած է որ Հայ ժողովուրդին հաւատքը հրաշագործ է:

ԹՈՐԳՈՄ ԱՐԷ. ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Առաջնորդ

Սեպտեմբեր 1986  
Նիւ Եորք, Ն.Ե.



THE CITY OF NEW YORK  
OFFICE OF THE MAYOR  
NEW YORK, N.Y. 10007

September 13, 1986

To All In Attendance  
Feast of the Exaltation of the Holy Cross  
Holy Cross Church of Armenia  
580 West 187th Street  
New York, New York 10033

Greetings:

On behalf of more than seven and a half million New Yorkers of all faiths and of all national backgrounds, I salute His Beatitude Archbishop Shnorh Kaloustian, Patriarch of the Armenians in Turkey, on the celebration of the Feast of the Exaltation of the Holy Cross.


This also marks the Patronal Feast of the Holy Cross Church of Armenia, which plays such a vital role in the spiritual and community life of our City.

With all good wishes to His Eminence, Archbishop Manoogian; to Rev. Father Guregh Kalfayan; and to Hagop Uryan and Hagop Samsonian, whose hard work and dedication have assured that this will be memorable two-day celebration.

Sincerely,

Edward I. Koch  
Mayor

This page is sponsored by  
JACK (HAGOP) SAMSONIAN



ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻՒՆ ԽՕՍՔԸ

Սիրելի Հաւատացեալներ,

Տարիներով Սուրբ Խաչ Հայաստանաց Եկեղեցին եղած է ձեզի հոգեկան սնունդի, զօրացման, մխիթարութեան, յուսադրութեան, աղօթքի աղբիւրը: Տարիներով այս եկեղեցիին մէջ պահած էք մեր կրօնական եւ ազգային աւանդութիւնները:

Մեր հայրերու շունչովը, աղօթքներովը, շարականներովը կենդանի պահեցիք այս եկեղեցին, այս օտար ափերուն վրայ: Ահաւասիկ, նոր կեանք, նոր կենդանութիւն բերիք դուք այս եկեղեցիին կամարներուն տակ զետեղելով ՉԱՐԽԱՓՈՒՆ ԱՍՏՈՒԱ-ԾԱՄՕՐ ՀՐԱՇԱԳՈՐԾ նկարը, եւ եկեղեցիին դռները բացիք Հայուն եւ օտարին իբրեւ ուխտավայր:

Մենք կը զգանք թէ՛ այս նկարը հոգետր կեանքի, ներշնչումի եւ գոհունակութեան պատճառ է մեր բոլորին համար:

Ուրախութեամբ եւ հաճոյքով է որ կը շնորհատրենք մեր եկեղեցիին բոլոր անդամները, Ծխական Խորհուրդը, Օծման Յանձնախումբին բոլոր անդամները որոնց անխոնջ ջանքերով այս եկեղեցին հաւատքի տուն մը, աղօթքի տուն մը ըլլալով հանդերձ՝ կ'ըլլայ նաեւ ուխտավայր մը հայ եւ այլ հաւատացեալներու համար:

Որդիական մեր ջերմ զգացումները կը յայտնենք Թեմիս Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Ա. Արք. Մանուկեանի որ քաջալեր հանդիսացաւ այս աշխատանքին իրագործումին եւ յաջողութեան համար:

«Թագաւոր Երկնաւոր, զԵկեղեցի քո անշարժ պահեաւ»:

Աղօթարար՝

Կիրեղ Ա. Քննչ. Գալֆայեան  
Հոգետր Հովիւ



**ԾԻՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍԲԸ**

Սիրելի բարեկամներ,

Հայաստանեայց Եկեղեցին օրհնուած է ասանդութիւններով եւ սովորութիւններով որոնք մեր ազգին թանկագին գանձերն են, եւ որոնց կառչելով Ան կարողացած է իր գոյատեւումը ապահովել նոյնիսկ մեր պատմութեան ամէնէն մոպօ օրերուն:

Աստուածամօր այս գեղեցիկ նկարը Յիսուս Մանուկով, զոր սիրալոժար վերարտադրեց արժէքատր արուեստագէտ Տիար Սիմոն Սամսոնեան, նոր յատկում մը պիտի ըլլայ մեր եկեղեցական գանձարանին մէջ: Նկարը որ ժողովրդական ասացուածքով կը կոչուի ՉԱՐԽԱՓԱՆ, դարերով մեր ժողովուրդին ինչպէս նաև ոչ հայերու եւ ոչ քրիստոնէաներու՝ հաւատքի եւ ներնշումի ակր եղած է: Ունեցած ենք եւ մինչեւ հիմա ունինք Չարխափանի նուիրուած ոխտատուիներ ուր ժողովուրդը հաւատքով կը դիմէ իր բարի փափաքներուն իրագործման ինչպէս նաև բժշկութեան համար: Ըատեր այդ նկարին պզտիկ մէկ օրինակը կը կրեն իրենց վրայ որպէսզի անոր միջոցաւ չարը խափանուի:

Չարխափանի պզտիկ մէկ նկարը հայրս ինձի յանձնեց զինուոր երթալէս ասոյ որպէսզի անվտանգ եւ ապահով տուն վերադառնամ: Այդ նկարը մինչեւ այսօր վրաս կը կրեն, եւ անիկա մեր արուեստագէտին ուղղեցոյցը եղաւ Չարխափանի նկարը վերարտադրելու գործին որպէսզի հոս եւս շարունակուի այս բարի սովորութիւնը:

Այս առթիւ յանուն մեր եկեղեցիին Ծխական Խորհուրդին եւ Հովիտին կը փափաքինք մեր որդիական երախտագիտութիւնը յայտնել Ամեն. Տ. Ընորհրդ Ա. Արք. Գալուստեանի, Պատրիարք Հայոց Թորքոյ, որ իր Նիւ Եորք այցելութեան միջոցին՝ սիրով ընդունեց թեմիս Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Ա. Արք. Մանուկեանի միջոցաւ իրեն ուղուած մեր հրաւերը եւ մեր եկեղեցին այցելելով կը կատարէ այս նկարին սրբագործումը: 13 Սեպտեմբեր 1986 թուականը անմոռանալի օր մը պիտի ըլլայ մեր բոլորին համար, եւ Չարխափանի նկարը որ կը զետեղուի մեր եկեղեցիին մէջ, պիտի ըլլայ ներշնչման աղբիւր մը վերանորոգելու մեր հաւատքը եւ նուիրումը մեր եկեղեցիին եւ ասանդութիւններուն:

Իմ մտղթանքն է որ ամէն Հայ իր զաւակներուն փոխանցէ այն սէրը եւ գորգորանքը զոր ինքը կը զգայ ազգային ժառանգութիւններուն հանդէպ:

Մնամ յարգանքով  
Ի դիմաց Սուրբ Խաչ Եկեղեցոյ Ծխական Խորհուրդի

Հագոպ Սրբան, Ատենասպետ

**The Chairman's Message**

Dear Friends,

The Armenian Church has been blessed with traditions and customs which have sustained our nation with an enduring courage and a creative spirit, through thick and thin of our long history.

The beautiful painting of the Holy Mother of God, with the baby Jesus in her arms, by Mr. Simon Samsonian — a noted artist and painter — will be a new precious relic to be added in the treasury of our traditions.

This sacred icon has been, back in our homeland, venerated by generations of Armenians, as well as by non-Armenians and even by Moslems for its power of thwarting the evil; popularly known as "Charkhapan Soorp Asdvadzadzin".

A pocket size copy of this sacred icon was in the possession of my family for over a century. In being instrumental of having this icon reproduced and placed in our church, my sole purpose was to help revive the dormant tradition of Charkahpan Soorp Asdvadzadzin among the members of our Parish and its many friends in this area.

We gratefully acknowledge the fact that, in response to our request, His Beatitude Patriarch Snork Kaloustian, consented to include a visit to our church in his busy schedule in the New York City.

The consecration service of the beautiful painting presided by His Beatitude on September 13, 1986, will certainly leave an indelible impact on our minds and souls, will continue to be a source of inspiration by extending to us the opportunity of renewing our dedication to our church, our people and our traditions.

Members, friends and the Parish Council of the Holy Cross Church, should be thankful to God for the opportunity of witnessing this history making event.

Reflecting on its significance and the manyfold implications, I strongly feel that we should bear the responsibility of passing it to the next generation, by instilling in our children and grandchildren the love, respect and loyalty to traditions and customs which we hold so dearly.

Sincerely

Hagop Uryan

Parish Council Chairman

## ՆՈՐ ՈՒԽՏԱՏԵՂԻ ՄԸ

Ինձի համար տարբեր փորձառություն մը եղա Նիւ Եորքի Ա. Խաչ Եկեղեցույ մէջ զեռեղուելիք Չարխափան Ա. Աստուածածնի նկարին օծման եւ այդ առթիւ կատարուելիք Մատաղօրհնութեան Յանձնախումբի առեւտարութիւնը ստանձնել:

Պէտք է խոստովանիմ որ առաջին անգամն է որ Հայ կեանքէն ներս նման պատասխանատու պաշտօն մը ստանձնեցի: Յանձնախումբի առաջին հանդիպումին՝ երբ ձեռնարկին մանրամասնութիւններուն մասին խօսեցանք, այն ատեն ատելի զգացի ծանրութիւնն ու պատասխանատուութիւնը ինձի վստահուած պաշտօնին: Սակայն շնորհիւ Եկեղեցույ Հոգեւոր Հովիւին, Ծխական Խորհուրդի Առեւտարութիւն, Յանձնախումբի եւ Երգչախումբի անդամներուն համերաշխ գործակցութեան՝ յարուցուած դժուարութիւններն ու խոչընդոտները հարթուեցան, ձեռնարկին նկարագիրը ատելի պայծառացաւ եւ աշխատանքը իր բնական հունին մէջ մտաւ:

Ինձի համար ուրախութիւն եւ նոյն ատեն յուզիչ էր նկատել թէ Յանձնախումբի իրաքանչիւր անդամ ինչպիսի նուիրումով կը մօտենար իրմէ պահանջուած աշխատանքին եւ ինչպիսի հաւատքով կ'արտայայտուէր Չարխափան Ա. Աստուածածնի նկարին զօրութեան մասին:


Այս նախաձեռնութեան համար արդէն իսկ ստացուած է Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի օրհնութիւնը, եւ երբ Առաջնորդ Սրբազան Հայրը տեղեկացուց թէ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Ընորհք. Արք. Գալուստեան ընդունած է իրեն եղած հրաւերը եւ ներկայ գտնուելով պիտի կատարէ նկարին օծումը եւ մատաղօրհնութիւնը՝ բոլորիս խանդավառութիւնը նոր թափ ու եռանդ ստացաւ:

Սեպտեմբեր 13-14ի հանդիսութիւնը երկար ամիսներու ծրագրումի եւ նուիրեալ աշխատանքի արդար արդիւնքն է, եւ վստահ եմ որ Գործադիր Յանձնախումբի անդամները պիտի կարենան իրենք զիրենք երջանիկ զգալ՝ այսպիսի կարեւոր ձեռնարկի մը յաջողութիւնը վայելելով:

Ահաասիկ այս առիթով Նիւ Եորք եւ շրջակայքի Հայ հաւատացեալները այժմ ունին նոր ուխտատեղի մը

ՅԱԿՈՒ ՍԱՄՍՈՆԵԱՆ

Առեւտարութեան Գործադիր Յանձնախումբի



## A NEW SHRINE

It was a different experience for me to be the chairman of the Committee for the Consecration of the Charkhapan painting and the Madagh Blessing which will take place at Holy Cross Church of Armenia, New York City.

I have to confess that it is the first time that I have accepted a responsible position in the Armenian Community.

At the first meeting of the committee when we discussed the particulars, it was then that I felt the gravity of the responsibility given to me with this position. But, with the help of the Parish Priest, the Parish Council Chairman, the Committee and the Choir members, harmony reigned and all our problems were resolved. It was then that the character of the work of the committee became clear and our endeavors continued.

It was a joy to see the dedication of the committee members to their given tasks and to see the way in which they expressed themselves about the divine strength of the Charkhapan painting.

After we received the Blessings of His Eminence Archbishop Torkom Manoogian, Primate of the Diocese of the Armenian Church of America, our enthusiasm was unsurpassed, when he informed us that His Beatitude Archbishop Shnork Kaloustian, Patriarch of the Armenians of Turkey had graciously accepted the invitation to consecrate the painting and bless the Madagh.

This auspicious occasion which will take place on September 13 & 14, 1986 is the outcome of many months of planning and dedication. I am sure that the committee members will be pleased at the successful consummation of this event.

Now, the Armenians have a New Shrine. This Shrine is a symbol of the staunch faith of our people.

Hagop Somsonian  
Committee Chairman



**ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ**  
**«ՉԱՐԽԱՓԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ»Ի ՆԿԱՐԻՆ**

Ֆաթիհ Սուլթան Մեհմեդ Բ.-ի օրով, Պոլսոյ թաղերէն, Էտիրնէ Գարույի մէջ ժէզուիթներու պատկանող երկու եկեղեցիներ կային՝ Ս. Նիկողայոս եւ Ս. Աստուածածին, ուր հանրածանօթ էր Չարխափան Ս. Աստուածածնի նկարը՝ պատրաստուած 1475 թուականին:

Գաւառներէն փախչող առաջին գաղթական Հայեր կը հաստատուին այս շրջանին մէջ: Հակառակ իրենց անկայուն եւ անապահով վիճակին, կը բանակցին ժէզուիթներու հետ եւ կը գնեն Ս. Աստուածածին եկեղեցոյ կէտը՝ իրենց կրօնական արարողութիւնները կատարելու համար:

Ժամանակի ընթացքին թրքական կառավարութիւնը կը գրաւէ այդ գոյգ եկեղեցիները եւ մզկիթի կը վերածէ: Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ գտնուող Չարխափան Ս. Կոչսի նկարը կը մնայ հայերուն մօտ:

1829 թուականին երբ օծումը կը կատարուի Պոլսոյ Գարակէօսթիկի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցոյ՝ հրաշագործ այդ նկարը կը բերուի եւ կը զետեղուի եկեղեցոյ մէջ, որուն շնորհիւ յիշեալ եկեղեցին մեծ համբաւի կը տիրանայ եւ ուխտի օր կը նշանակուի Հինգշաբթի օրերը:

Հայ թէ ոչ-հայ ուխտաւորներ մօտաւոր եւ հեռաւոր թաղերէ գունդ առ գունդ կը դիմեն Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցին Չարխափան Ս. Աստուածածինէն խնդրելու իրենց ուխտերուն կատարումը եւ Անոր մատուցանելու իրենց աղօթքները:

Այն հաւատացեալները որոնք նիւթական միջոցներն ու դիրքութիւնը չունէին դիմելու Արմաշի մէջ գտնուող նոյնանուն Չարխափան Ս. Աստուածածնին, որ կը կողջուէր Մեծ Արմաշի Չարխափան, ուխտի կու գային Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցոյ մէջ գտնուող Ս. Աստուածածնի նկարին — Փոքր Արմաշի Չարխափան—:

1900 թուականին երբ փայտակերտ Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցին հրդեհի զոհ կ'երթայ, Հայ հաւատացեալները կրնան փրկել Ս. Աստուածածնի նկարը եւ փոխադրելով կը գետեղեն Պալատ թաղի Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ աջակողմեան խորանին վրայ:

Չարխափան Ս. Աստուածածնի նկարը, որուն օրինակները բազմաթիւ հսկեր միշտ կը պահեն իրենց տուններուն եւ կամ պալատակներուն մէջ, հրաշագործ կը նկատուի ոչ միայն Հայրենուն մօտ՝ այլ նաեւ ուրիշ քրիստոնէայ եւ իսլամ ժողովուրդներու մօտ:

Կը պատմուի որ Սուլթան Մահմուտի աղջիկը, Ատիլէ սուլթան, իր ցատերուն դարմանը կը գտնէ անձամբ գալով եւ ծնրադրելով Չարխափան Ս. Աստուածածնի նկարին առջեւ: Եւ ի նշան երախտագիտութեան՝ եկեղեցոյ դրան քով մարմար քարով շինել կու տայ մշտահոս աղբիւր մը՝ մասնաւոր արձանագրութեամբ:

Չարխափան Ս. Աստուածածնի նկարը կը շարունակէ ըլլալ գորգորանքի ստապկան բազմաթիւ ուխտաւորներու, եւ կը շարունակէ սփոփել հաւատքով իրեն դիմողներուն ցատերը:

**A BRIEF HISTORY OF THE  
PICTURE OF "CHARKHAPAN"**

During the reign of the Ottoman Emperor Fatih Sultan Mehmet II, there were two Jesuit churches in Constantinople. One was named St. Nicholas and the other Holy Mother of God in which was the famous painting of the Madonna, painted around 1475.

The first Armenian arrivals from the interior of Turkey, settled nearby these churches. After a while, they contacted the Jesuits and were able to buy half of the church dedicated to the Holy Mother of God where they could perform their religious services.

After a time, the Ottoman government took the church over and converted it to a mosque. The painting of the Madonna which was known among Armenians as "Charkhapan Soorp Asdvadzadzin" remained in the possession of the Armenians.

In 1829 when a church dedicated to St. John the Chrysostom was built in the Karagumruk area of Constantinople, this marvelous painting was brought there. This church became famous because of the miraculous powers of the holy painting. Thursdays were set as the day of pilgrimage for this shrine.

Armenians and non-Armenians from nearby and distant areas visited the shrine in large numbers to pray to the Holy Mother of God, to grant their wishes.

In 1900, when the church was razed to the ground, this painting was saved and placed in the Church of the Holy Archangels in Balat, Constantinople.

This painting has been considered miraculous not only by the Armenians but by other Christian communities and Moslems. It is said that the daughter of Sultan Mahmut, princess Adile who was sick, was cured after she visited this shrine and prayed on her knees to be cured with the intercession of the Holy Mother of God. After her cure as a sign of gratitude, she had an inscribed, marble fountain built near the entrance of St. John the Chrysostom Church.

This painting is still an object of veneration and loving care of the faithful in the Church of Holy Archangels in Istanbul, Turkey, and grants comfort to all who faithfully ask in their prayer for the intercession of "Charkhapan".

*Compiled  
Rev. Fr. Mamigon Vosganian*



### ԿԱՐԾԵՍ ՄԷԿԸ ՎՐՁԻՆՍ ԿՆՈՒԱԶՆՈՐԴԷՐ . . .

Ընդհանրապես նկարներու ընդօրինակութեան պատուէրներ չեմ ընդունիր:

Չարխապիան Ս. Աստուածածնի նկարին ընդօրինակութեան պատուէրը ընդունեցի՝ որովհետեւ առաջարկը ներկայացուցաւ զաւկիս Յակոբ Սամսոնեանի կողմէ, եւ ապա իմ ամենէն սրտիս խօսող միջոց «Մայրութիւն» է, որուն նուիրուած պատատներ շատ ունիմ, եւ անոնցմէ մէկ քանին ալ արժանացած եմ մրցանակներու: Ես մայրս չեմ տեսած . . . եւ մանկութիւնս անցուցած եմ որբանոցներու մէջ. այս է պատճառը որ «մայրութեան» կարօտը ունեցած եմ:

Ինձի յանձնուած էր սետով ներմակ եւ գեղագիտականօրէն ոչ շատ յաջող տպագրուած օրինակ մը Ս. Աստուածածնի նկարին, եւ կը պահանջուէր այդ նկարին գունատը եւ մեծադիր իղաներկ նմանատիպը:

Առաջին ակնարկով այդ նկարը սրտիս ոչինչ խօսեցաւ: Պատահաբար պատրաստեցի եւ սկսայ աշխատանքի:

Ահա այստեղ է որ զարմանալին պատահեցաւ: Վրձինի առաջին հարուածէն ետք՝ տարօրինակ զուարթութեամբ եւ երջանկութեամբ պատուեցաւ հոգիս: Գոյներուն ընտրութիւնը որեւէ դժուարութիւն չյարուց: Հոգեկան ուրախութեան մէջ էի: Գործը դիւրին եւ արագ կ'ընթանար, կարծես մէկը ձեռքէս բռնած էր եւ վրձինս կ'առաջնորդէր . . . :

*Արթուր Աստուածածնի*

### Jack & Simon Samsonian Family

*Մրգաստանի մը նման կը սիրեմ քեզ, Հայ Լեզու . . .  
Մեր հայրենի պալատէն, պարտէզներէն մնացորդ՝  
Դալարագեղ դուն պուրա՛կ, որ դիմացար դարերու  
Եւ կը մնաս միշտ ստոյգ, հին աւիշով կենսաշորդ:*

*Mr. & Mrs. Hagop Voskinarian*

*Քանի մեր երգը հնչում է հզոր,  
Եւ հայ մայրերը երգում են օրօր,  
Քո ամենահզոր լոյսը չի հատնի,  
Մեր հոգում ջահուած բարբառ մայրենի:*

*Mr. & Mrs. S. M. Ardouny*

*Քանի լեզու գիտնաս, որդիս, այնքան մարդ ես, իմացիր,  
Ամէն լեզուով ամէն ազգի կրօքին վարս ես, իմացիր,  
Բայց մայրենիդ թէ անաղարտ տխակ պահես վարդերում՝  
Սարերի մէջ ազգիդ համար Արարատ ես, իմացիր . . .*

*Mr. & Mrs. Harry Civan*

*Մօրս նման քաղցր ու ազնիս իմ հայրենիք,  
Հովեր ունես՝ մօրս քնքուշ ձեռքի նման,  
Թէն ընկան քո բիւր որդիք,  
Բայց դու յաւերժ, դու ժամանակն ես անվախճան:*

*Mr. & Mrs. Suren D. Fesjian*

*Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մէջ ես,  
Դու սրտիս մէջ ես, ոչ լեզուիս վրայ,  
Իմ սրտի միջից՝ թէ սիրտս ճեղքես՝  
Դրոշիդ բոցը պիտի հուրհրայ:*

*Mrs. Haik Kavookjian*

Դո՛ւն առաջին վանկ շրթունքիս, առաջին վանկ իմ հոգույս,  
Նախկին՝ն հնչիւն իմ մանկական լեզուիս հեզ,  
Որով լացի ու երգեցի միշտ յուզումներս, իղձս ու յոյս,  
Իմ մայրենի քաղցրի՛կ բարբառ, ողջո՛ւն քեզ:

*Mr. & Mrs. Arev Kirkorian*

Վկայ է սակայն բովանդակ երկիր,  
Որ մենք կարենք ապրում ենք կրկին,  
Եւ ուր հասնում է հայի գիրքն ու գիր  
Կենդանի է դեռ հայրութեան ոգին:

*Mr. & Mrs. Khachik Ohanian*

*Torosian Brothers Carpet Co. Inc.*

492 Main Street  
Fort Lee, New Jersey 07024

**Jack and Mike Torosian**

Քե՛զ, Հայ Լեզո՛ւ, կը սիրեմ մրգաստանի մը անան . . .  
Մեր անցեալին թանձրահիտ ստուերներուն մէջ՝ կարծես  
Մէյ-մէկ պտո՛ւղ քու բոլոր բառերդ ինձի կ'երեսան,  
Որոնց մէջէն կը քալեմ ու կը քաղեմ զանոնք ես:

Արի՛, եղբայր, փառաբանե՛նք  
մեր քաղցրաբառ հայոց լեզուն,  
Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր,  
մեր հոգու լար հայոց լեզուն:

*Anonymous*

*Մայրերն են պահել մեր հայոց երգը,  
Երբ մանուկներին օրօր են ասել,  
Արցունքն աչքերին, սրտերում վերքը  
Մեր ազատ կեանքի օրն են երագել:*

*Armen Auto Repair*

375 Broad Street  
Clifton, New Jersey 07013

**Augie Cerkezian**

*Mr. & Mrs. Vahram Arslanyan*

*Եւ հայ մայրերն են պահում հիմա էլ  
Մեր երգը, լեզուն մեր վսեմ ոգին,  
Իրենց դարատր մայրերին վայել  
Սրտով նուիրուած մեր հայրենիքին:*

*Mr. & Mrs. V. Baharyan*

*Mr. & Mrs. Manuel Benzer*

*Ես ձեր ձեռներն եմ համբուրում, մայրեր,  
Սրբության սրբոց էք դուք իմ հոգում,  
Պահպանեցէք միշտ հայրենէնը մեր,  
Որ շար յախտեան մնանք աշխարհում:*

*Mr. & Mrs. Vaughn Chambers*

In loving memory of Ardemis Zakian

*Mary Diane Harrian*

In memory of Goodian-Harrian family

*Քանի աշխարհում կայ Արարատ սար,  
Ծակատին՝ հայոց փառքն արեւատառ,  
Ոչ մի ահեղ ձեռք քեզ չի սասանի,  
Մեր սրտից կերտուած բարբառ մայրենի:*

*Johnson Avenue Exxon S/C*

141 Johnson Avenue  
Hackensack, New Jersey 07601

**Greg Hamparsumian**



*Dr. John Ohannes Ounjian*

*Քանի կայ հողը մեր հայրենական,  
Կան ծաղկունքն անշէջ, ժպիտը մանկան,  
Պիտ շողա՛ նման վառ ծիածանի,  
Բիրեղեայ քերթում՝ բարբառ մայրենի:*

*Mr. Rupen L. Saddler*

*Tabibian Enterprises*

2195 Route 4E  
Fort Lee, New Jersey 07024

*Ու տե՛ս որդիս, ուր էլ լինես,  
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,  
Թէ մօրդ անգամ մտքից հանես,  
Քո մայր լեզո՛ւն չմոռանաս . . .*

*Mr. & Mrs. Hagop Uryan*

*A-1 Fort Lee Auto Body & Repair Inc.*

454 Main Street  
Fort Lee, New Jersey 07024  
*George Khorozian*

*Mr. & Mrs. Nurhan Adarian and Family*

*Alart Jewelry & Diamonds*

578 5th Avenue Booth 33  
New York, New York 10036  
*Allan Becer*

*Mr. & Mrs. Nishan Andonian*

*Anonymous*

*Mr. Krikor Anoushian & Mother*

*Mrs. Alice Aprahamian*

In memory of Isahag Aprahamian

*Ark Gem Inc.*

58 W 47th Street  
New York, New York 10036  
*Kegham Dirielyan - Arek Nisanyan*

*Arnes Jewelry*

578 5th Avenue  
New York, New York 10036

*Mr. & Mrs. Shah Arslan*

*Avak Sportswear*  
6400 Broadway  
West New York, New Jersey 07093

*Mr. & Mrs. Puzant Balaian*  
In memory of Dr. Sonia Avakian

*Mr. & Mrs. Eli Bogosian*

*Casis Jewelry Inc.*  
578 5th Avenue  
New York, New York 10036  
*Levon & Agop Dursunian*

*Mr. & Mrs. Sam Chapootian*

*Mrs. Rose Chookazian*

*Mr & Mrs. David Davidian*  
In memory of their parents

*Delicate Gem Corp.*  
25 West 47th Street  
New York, New York 10036  
*Mr. & Mrs. Arthur Minnetian*

*Domani Fine Jewelry, Inc.*  
48 West 48 Street Suite 202  
New York, New York 10036  
*N. Ara Misak*

*Elegant Fashion Leathers, Inc.*  
652 Anderson Avenue  
Cliffside Park, New Jersey 07010

*Foremost Jewelry Inc.*

578 5th Avenue  
New York, New York 10036

*Mr. & Mrs. Kirkor Gulagaci*

*Gulian Jewelers Inc.*

6126-28 Bergenline Avenue  
West New York, New Jersey 07093  
*Hirant Gulian*

*Mr. & Mrs. Gregory Hairanian*

*Mr. & Mrs. James Haroutunian*

*Mr. & Mrs. Richard K. Haroutunian*

*Dr. & Mrs. Antranik Hazaryan*

*Mr. & Mrs. Garo Hosdaghian*

*International Polishers*

578 5th Avenue Room 7 & 8  
New York, New York 10036  
*Apet Kapu*

*Mr. Leon Kalayjian*

*Mr. Manuel Kalayjian*

*Kaprielian Enterprises Inc.*

37 West 47th Street  
New York, New York 10036  
*Hratch Kaprielian*

*Mrs. Nelly Kasparian*

In memory of Kasparian, Ghougasian, Kojamanian Families

*Mrs. Arshaloys Kebabjian*

*Kevart Mobil*

Route 46 West  
Little Falls, New Jersey 07424  
*K. Ucar*

*Lawton Exxon Auto Service Inc.*

678 Bergen Blvd.  
Ridgefield, New Jersey 07657

*Mayfair Liquors*

*Onnik Karinca*

*M. & B. Fashion Inc.*

6400 Broadway  
West New York, New Jersey 07093  
*Murat Berberoglu*

*Mike's Diamond Setting*

48 West 48 Street  
New York, New York 10036  
*Mihran Akyemeniciyan*

*Neuchatel Chocolates*

1369 6th Avenue  
New York, New York 10019  
*Krikor Yepremyan*

*Mr. & Mrs. Nishan Nazar & Family*

*Nippon Industries, Inc.*  
1 Grand Avenue  
Englewood, New Jersey 07631  
*Marty Ekmekjian*

*Mr. Istepan Puskul*

*Royal Jewel Setting Co.*  
27 West 47th Street Mez. No. 2  
New York, New York 10036  
*Mirijohn and Hachik Givelekian*

*Mr. & Mrs. Sahin Saglamer*

*Mr. & Mrs. Robert Sarafian*

*Mr. & Mrs. Hampar Shahinian*

*Mrs. Hatchik Simonian*  
In memory of her beloved ones

*Steve's Auto Repair*  
339 Valley Road  
Clifton, New Jersey 07013

*Armenuyi & Robert Taibi*

*Mr. & Mrs. Henry Takoushian*

*Three "B" Corporation*  
65 Atlantic Avenue  
Oceanside, New York 11752

*Mr. Istepan Toroslar*

*Mr. Michael H. Touhtarian*

*Euroteh Motors Inc.*  
1641 Bergen Blvd.  
Fort Lee, N.J. 07024  
*Zenop Tuncer*

*Mr. Simon Tutak*

*Mr. & Mrs. Kirkor Urgancioglu*

*Mr. Garo Varolian*

*Mr. Hamparsum Varolian*

*Mr. & Mrs. Murat Varolian*

*Mr. & Mrs. Siragan Varolian*

*Mr. Mrs. Harutyun Varolian*

*Vihan Costum Tailors*  
6010 Bergenline Avenue  
West New York, New Jersey 07093

*Century 21*  
Ridgeco Realty  
632 A Bergen Blvd. Ridgefield, N.J. 07657  
*Suren Yanur*

*Mr. & Mrs. Torkom Demirjian*

**PATRONS**

*Mrs. Araksi Alboyaciyian*

*Mr. Mike Chirkiaian*

*Mrs. L. Hagop Cholakian*

*Mr. & Mrs. Rupen Gozubuyukoglu*

*Greg's Mini Market*

Route 46 Eastbound  
Little Falls, New Jersey 07424

*Mrs. Dikranouhi Hajinlian*

*Mr. & Mrs. Jibrael K. Haroutunian*

*Dr. & Mrs. Edgar M. Housepian*

*Mr. & Mrs. Yervant Kantar*

*Zohra Kebabjian*

In memory of Boghos & Edward Kebabjian

*Mr. Simon Klanian*

*Mrs. Anne Kondrajian*

*Mr. & Mrs. Murad Mikaelian*

*Near East Importing Corp.*

Atlas Terminal Bldg. #3  
8000 Cooper Avenue  
Glendale, New York 11385

*Mrs. Vartouhi Nersesian*

*Mr. & Mrs. Harry Odabashian*

*Mr. & Mrs. V. Ohanyan*

*Mr. Garbis Partikian*



*Mr. & Mrs. Henry Sanossian*

*Mrs. Satenig Tarzian*

In memory of Terzian & Parinian Families

*Mr. & Mrs. Norayr Uryan & Family*

*Mrs. Anne Zarookian*

I memory of Takoohy Bolsetzian

*Sevan Shish Kebab House*

644 Anderson Avenue  
Cliffside Park, New Jersey

*Krikor Tailoring*

644 Anderson Avenue  
Cliffside Park, N.J. 07010

*Krikor Pirich*

*A R O Jewelry Inc.*

58 West 47th St. Booth #23  
New York, N.Y. 10036

*G. Hagobian*

*A.S.A. Auto Service*

1671 Bergen Blvd.  
Fort Lee, N.J. 07024

*Charlie Sariyan*

*Avo - Jack Car Service, Inc.*

660 Main Street (Cor of Essex St.)  
Lodi, New Jersey

*Pasha General Carpentry & Cabinets*

149A Anderson Ave.  
Fairview, NJ 07022

*Suren Pasaoglu & Kevork Tasciyan*

MEMBERS OF THE COMMITTEE FOR THE CONSECRATION OF CHARKHAPAN  
AND MADAGH BLESSING



First row seated: *Marion Haroutunian, Hagop Uryan, Rev. Fr. Guregh Kalfayan-Pastor, Hagop Samsonian-Chairman, Zavart Bogosian*; Second row: *Nubar Kupelian, Norayr Uryan, Manuel Benzer-Treasurer, Dr. Antranik Hazaryan, Hagop Kalfayan-Vice chairman, James Haroutunian, Krikor Anoushian-Secretary, Levon Bogosyan, Eli Bogosian, Rupen Gozubuyukoglu*; Third row: *Aram Gozubuyukian, Murat Varolian, Khachik Ohanian, Harry Civan, Artin Dulgerian, Robert Sarafian, Yervant Kalayciyan*. Missing: *Hilda Biosyan, Manuk Capan, Hirant Gulian, Yervant Kantar, Sirpuhi Mark, Shahan Nazar, Dr. Dikran Tahtaburunian*.

**ՄԱՏԱՂՅՈՒ ՈՉԽԱՐ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ**

Երուանդ Գալայճեան  
Մանուէլ Գալայճեան  
Նուպար Գարրնճա  
Օճնիկ Էօզպէկ  
Մանուկ Թորոսյար  
Կարօ Վարօլեան  
Մուրատ Վարօլեան  
Սիրական Վարօլեան  
Արթին Տիլկերեան:

